

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՑՅԱԼ
(ՍՈԿՐԱՏ ԽԱՆՉԱՆԻ «ԱՐՑԱԽԻ ԱՐԾԻՎԸ» ՊՈԵՄԸ)**

ԱՆԱՐԻՏ ԱԹԱՅԱՆ

**ԱրՊՐ, Յայ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ
բ.գ.թ., պրոֆեսոր**

«Պատմությունը ժողովրդի հիշողությունն է, նրա ոգու, արարումի կողմնորոշիչը։ Առանց այդ հիշողության կմոլորպի, կանհետանա ժողովուրդը», - գրում է Ս. Խանյանը, ում ստեղծագործական հումքում բազում են մայր ժողովրդի հերոսական էջերի անդրադարձները։ Կենսական խոր տպավորություններով ու գեղարվեստական հմարանքների ձեռքբերումներով հարուստ բանաստեղծը ձեռք մեկնեց պոեմի ժամրին՝ ընթերցողի դատին հանձնելով «Արցախի արծիվը», «Նահատակ լուսո», «Միեր», «Արցախուիհն» պոեմները։ «Արցախի արծիվը» պոեմը բարձր գնահատվեց գրականագետների կողմից, և հեղինակը 1992թ. արժանացավ ԼՂՀ նախարարների խորհրդի Եղիշեի անվան մրցանակին։ Բանաստեղծը ձեռք մեկնեց 9-րդ դարին, մի ժամանակաշրջան, երբ հայ ժողովուրդը հեծում էր արարական խալիֆայության ծանրածանր լծի տակ։ Յայ պատմագրության ականավոր ներկայացուցիչ Թ. Արծրունին իր «Արծրունյաց տան պատմություն» գրքում հանգամանորեն նկարագրել է այն կենաց ու մահու պայքարը, որ մղել է հայ ժողովուրդը Յայոց աշխարհի տարբեր մասերում։ Անմահ պատմիչը դարերին է հանձնել առանձնապես Մուշում, Սասունում և Արցախում տեղի ունեցած հերոսական այն ընդվզումները, որ կատարել է մեր ժողովուրդը։ Մուշում Յուսուփ գորավարի, այնուհետև Բուղայի սունդգություններն ու հալածանքները հայ ժողովրդի դեմ պատմիչը նկարագրել է անհուն ցասումով։ Յայտնի է, որ 850թ. Մուշում Յուսուփ ոստիկանի սպանությունից հետո Յայաստան ներխուժեց արար գորավար, ծագումով թուրք Բուղամ՝ բազմահազարանոց բանակով։ Նա, իրի ու սրի մատնելով հայոց գյուղերն ու քաղաքները, հասել էր Դիզակի գավառի Տող գյուղին։ Այն ժամանակ Դիզակի Առանշահիկ իշխան Եսայի ապու Մուսեն իր փոքրաբիկ գորքերով դիմակայեց Բուղայի բազմահազարանոց բանակին և ջախջախիչ հարված հասցրեց նրան։ Թ. Արծրունին հպարտության զգացումով է նկարագրում Եսայի ապու Մուսեի հերոսանարտը 853 թվականին, որը մոտեցրել է հայ ժողովրդի պետականության վերականգնումը 885թ.։ Ս. Խանյանը, որպես թեմա ընտրելով պատմական այս իրադարձությունը, արձագանքել է արցախյան պատերազմին, որի ընթացքում հերոսացան Եսայի ապու Մուսեի թուռները հանդիսացող բազում արցախցիներ։ Պատմությունը, լեզու առած, խոսեց Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմում՝ հանուն այսօրվա հաղթանակի և ապագա խաղաղ կյանքի։

* Յոդվածն ընդունվել է 01.10.2013։

Յոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՐ Յայ գրականության և լրագրության ամբիոնը։

Պոեմն աչքի է ընկնում կուռ կառուցվածքով, պատկերային թարմ հյուսվածքով, գաղափարական հստակ ու առողջ լուժումներով: Սկզբից մինչև վերջ զգացվում է պոեմի հղացման երակը, այն է՝ սրով եկողը սրից էլ կընկնի: Կառուցվածքային տարրերի յուրահատկությամբ «Արցախի արծիվը» հայ դասական պոեմի պահանջուրների գեղեցիկ շարունակությունն է: Նախերգում Ս. Խանյանը ընթերցողին տեղափոխում է Գոյիշ վանքը: Նա, թերթելով անցյալի գիրքը, հոգու և մտքի աչքերով տեսնում է մեր պապերի հերոսական գոյամարտը: Դա մի դաս է, որ ազդարարում է միշտ:

Յող ու թրի լուսե ոգին
Գիրն է ազգի և մարդու,
Ով դրանցով կամքը կոփի,
Ծնկի չի գա իր կյանքում [1]:

Նախերգում, դիմելով տեսիլքի հնարանքին, Խանյանը ընտրում է պայմանական մի ելակետ, որ հնարավորություն է տալիս ընթերցողին մտքով տեղափոխվելու անցյալի գիրկը: Տվյալ դեպքում Տողասարի գագաթին եղած հերիաքային աշխարհի մասին է խոսքը, ուր երևում են վրնջացող այրուծիեր, զինվորյալներ, արհասիրտ այրեր, ահարկու գորավարներ, թիրտ ցեղեր, հարկահավաքներ, հարկասուներ և այդ ֆոնի վրա՝ Արցախի պայազատները: Բանաստեղծը նշում է իր տեսիլքային հանդիպումը իշխան Եսայի հետ, որի հագին «Մետաքսակար չուխան» է, կողքին՝ կապած «Թուրք Առան»: Բանաստեղծը իշխան Եսայի հանդեպ տածած իր՝ ժառանգորդի սերն ընդգծելու համար նրան համեմատում է իր Խաչի պապի հետ: Դայ մարդու սովորությամբ Եսայը բացում է մառանի դրուք, իր թրծած գավառով առնում գինի ու հաց, պապենական հավատով խմում երեք կենաց: Դերիաքային իմաստուն ծերունու պես Եսայն առաջինը խմում է արցախյան հողի, երկրորդը՝ այդ հողը պաշտպանողների, երրորդը՝ արցախցու կենացը: Կենացներն առաջարկելուց հետո իշխան Եսայը հեծնում է իր ծին և սլանում Բուղայի դեմ, որ վիշապի պես չոքել էր Տողասարի լանջերին: Բանաստեղծը, իրեն համարելով այդ պայքարի պատմագիր, դիմում է ընթերցողներին.

Եվ թերում են իմ այս գիրքը,
Որ ձեր սրտի հետ խոսի,
Պատմի ամնահ քաջի մասին,
Սեր պապերի հավատով
Եվ Եսայու կենացն ասի
Հենց իր թողած գավառով [2]:

Բանաստեղծը պոեմի հենց սկզբից դիմել է բանահյուսական, Էպոսային նկարագրության հնարանքներին, և դա մեծապես հաջողվել է նրան: «Արցախի արծիվը» պոեմի մեջ առկա են Էպոսային տարրեր... Յովսեփի, Եսայի Ապու Սուսեի, Շուշանի, Բուղայի և մյուս կերպարները բարձրացվել են գեղարվեստական պատշաճ մակարդակի վրա: «Եսայի կերպարը ստեղծելիս հեղինակի հայացքն ավելի շատ սնունդ է առել մեր նորօրյա գոյամարտի հերոսներից, նրանց հայրենանվեր ստեղծագործություններից», -գրում է գրականագետ Վ. Ջակոբյանը:

Վիպական երկի թելադրանքով Խանյանը խմբավորել է իր հերոսներին: Որոշակի հարաբերությունների մեջ դմելով դրական և բացասական կերպարներին՝ Խանյանը ստեղծել է հայրենասիրական մի հիանալի երկ: Ելելով պոեմի սյուժե-

ից՝ բանաստեղծը ներկայացնում է հաջորդաբար ծագող ու լուծվող երևոյթները, հակադրությունները։ Դրանով է բացատրվում պոեմի իրադարձությունների ժամանակագրական նկարագրությունը։ Այն սկսվում է գլխավոր հերոսի՝ Եսայի ծննդով, բայց բավականին տեղ է հատկացված նրա հորը՝ գավառապետ Յովսեփին։ Յովսեփը հաջողված կերպար է՝ խանյանը կարողացել է նրան ներկայացնել հյա-արաքական փոխարաբերությունների ֆոնի վրա։ Յենց առաջին մասի առաջին գլխում ցոյց է տրված Յովսեփի համբավը ոչ միայն Արցախ աշխարհում, Յայաստանում, այլև արաքական խալիֆի մոտ։ Նրա անունը լսելով՝ խալիֆը հիխորտում էր և ծգտում վրեժինդիր լինելու նրան՝ համդուգն բնավորության համար։ Յովսեփը լավ գիտեր թշնամուն՝ նենգ խալիֆին, ուստի միշտ պատրաստ էր դիմակայելու հագարացոց զորաբանակներին։

Առաջին մասի երկրորդ գլխում նկարագրված է արդեն տասնութամյա Եսայի բնավորությունը։ Այդ տարիքում նրա առջև բացվել էին «Գիտության կապ ու հնար»։ Եսայը հանճարաշուրթ երիտասարդ է, հմուտ գրիչ է, կարգվել է վարդապետ, եղել է Արցախի բոլոր գավառներում։

Նա ժողովրդական հերոսի համբավ է ձեռք բերում։ Զջախսի է խաղում գյուղացիների զավակների հետ, նրանց հետ լինում կիրճերում ու ձորերում։ Նա «հշխանի մոտ իշխան է, Մշակի մոտ՝ ռամիկ»։ Տասնութամյա Եսայն արդեն հասցրել է դառնալ մարտերի ոգին։ Լուրջ հասնում է Յովսուֆ ոստիկանին, որ Յովսեփի գործերն արդեն վարում է որդին...

Պոեմում հետզհետեւ հարստանում և բացահայտվում են հերոսների ըմբռնումները, նրանց հոգերանությունը։ Երրորդ գլուխը, որ կոչվում է «Յարկահավաք», ծշմարտացի ներկայացնում է արաքական խալիֆայության ժամբ հարկահանություններն ու դրանց արյունալի հետևանքները։ Յիմք ընդունելով հյա պատմիչներ Սեբեոսի, Ս. Կաղանկատվացու, Ղևոնդի, Յ. Սամիկոնյանի, Թ. Արծրունու, Յ. Դրախմանակերտցու պատմագրություններում եղած հաղորդումներն արաքական հարկահանությունների եղանակների ու չափերի մասին՝ խանյանը գեղարվեստորեն հաջողված պատկերներով նկարագրում է դրանք։

Յարկահավաքին հաջորդում է զորահավաքը։ Յենց «Զորահավաք» էլ վերնագրված է պենմի չորրորդ գլուխը։

Նկարագրելով աշնանային Արաքսը՝ խանյանը նուրբ շտրիխներով պատկերում է Դիզակը և նրա դիրքը Արցախի համար։ Յարավային սահմանը՝ Արաքսը, Յովսիսայինը՝ հշխանագետը։ Երկու քոյսեր՝ մեկը մյուսին հարևան, բայց վորդովել են նրանք։ Մուշից հասել է ահարկու բոթը, որ հինգ բյուր զորքով նենց հարկահավաք Արդյունակ մահվան կրիմով սուրում է դեպի Դիզակ, դեպի Արցախ։ Դիզակցին, աշխատանքը թողած, զենք է վերցնում՝ պաշտպանելու իր օջախն ու տունը։

Խանյանը ուսումնասիրել է հայոց այրուծի պատերազմական արվեստի մասին եղած հաղորդումները և հմտորեն օգտագործել պոեմում։ Յենց այս գլխում նա ներկայացնում է Դիզակի այրուծի մարտական գործողությունները, որ հաճելի տպավորություն են թողնում։ Թշնամին անհամար է։ Պատմիչ Թ. Արծրունու գորից օգտվելով՝ բանաստեղծը նկարագրում է թշնամու բանակի ամբողջ կազմը, որի մեջ են փակլւան-ըմբշամարտիկներ, բազում դրոշներ, անքանակ փողեր, անհամար թմբուկներ, նիզակակիրներ, նետածիգներ, կապարծակիրներ,

տապարակիրներ: Նրանց դեմ առ դեմ կանգնած է Դիզակի այրու-
ծին: Երեք կողմից սեղմելով թշնամուն՝ արցախցիները հրաշքներ են գործում:

Արցախյան կոլորիտն ստեղծող ու ժողովրդական ավանդույթները ներկա-
յացնող պատկերները պոեմին հաղորդում են էպոսային բնույթ: Այդ առանձնա-
հատկությունն իրեն զգացնել է տալիս նաև երկրորդ մասում: Այստեղ հատկան-
շական են համարյա բոլոր բաժինները: «Հանդիպում» զլխում նկարագրված են
Քիրսա սարի լանջերին փոքած անտառները, որ ժողովուրդն անվանում է
Արևասար: Եսայն ամեն տարի՝ ձմեռ թե աշում, ընկերների հետ որս էր անում: Մի
անգամ էլ որսի ժամանակ հանդիպում է Տումի գյուղի տաճուտեր Արտամի աղջ-
կան՝ Շուշանիկին: Եսայը Սասնա ծուերին հատուկ բնավորությամբ իր սերու է
հայտնում Շուշանիկին, իսկ վերջինն էլ ասես Ծովինարի, Դեղձուն Ծամի, Խան-
դուր Խարունի և Գոհարի ժառանգորդն է, նրանց ամորիսածությամբ և սիրո ազն-
վագույն ընկալմամբ պատասխանում է քաջին: Երկրորդ մասի երկրորդ գլուխը
կոչվում է «Նշանդրեք»: Դաճելի լուրջ տարածվում է Տողում, որ քաջ իշխանը աղ-
ջիկ է ըստրել: Այդ մասին կարորում ենք.

Տումուց մինչև Տող թևում է լուրը,
Կամուրջ են հյուսում երկու գերդաստան,
Աղոթք էր դարձել և թթու ջուրը,
Որպես գույգերի հանդիպման վկան:
Սուլրը Դիզախայտը ժպտում էր Քիրսին,
Որպես սրբազն՝ ծեռքին բուրվառը,
Աշնան երփմերանգ գողգերը ուսին,
Աչքալուսանք էր հղում Թարթառը[3]:

Այդ աչքալուսանքին մասնակցում է ամբողջ Արցախը՝ ծայրեժայր: Բնության
անձնավորման եղանակով խանյանը ընդգծում է Դիզակի երիտասարդ իշխանի
հանդեպ առաջացած համաժողովրդական մաքուր սերը: Պա երկրի և հերոսի
համաձույլ ընդգրկման և փոխադարձ նվիրվածության խորհրդանիշ է, ժողովր-
դական բանահյուսության ավանդույթներով ստեղծված հիանալի պատկեր: Նո-
րափեսայի նշանդրեքը նկարագրվում է որպես ժողովրդական տոռահանդես: Առանձին շտրիխներով խանյանը ստեղծել է արցախյան սովորույթները վերծա-
նող հետաքրքիր պատկերներ, որոնցից գգում ես մեր հմօրյա նահապետական
նիստուկացի գեղեցկությունն ու բույրը:

Սիրո, հավատարմության, հայրենի օջախի հետ անհատի ճակատագրի սերտ
կապի, կանացի տագնաապի, տղամարդու կամքի, ուժի և անձնուրացության
հրաշակի պատկեր է երկրորդ մասի երրորդ գլուխը, որ կոչվում է «Երազ»: Շու-
շանիկի երազը ոչ միայն նշանվող գույգերի ներկան պատկերող կանխազգա-
ցում է, այլև օրինակելի ընտանիք կազմելու վերաբերյալ արցախցի գույգերի
պատրաստակամությունը ցուցադրող ասք: Դեքիաթային-տեսիլքային, կենսա-
կան է Շուշանի երազը: Նա Եսային պատմում է, որ երազում իրենք թևում ու հաս-
նում են Վերին Սիակին, որի մոտ Որդին էր, իսկ դեմք՝ Շոգին: Նրանք արցախցի
գույգին նստեցնում են իրենց քով, ողջունում: Արարիչը ջրոեղում է Եսայի թու-
րը, Քրիստոս օծում է մեռոնով, իսկ հոգին զինում է Եսայի ոգին: Նրանք հաղթու-
թյան պասակ են դնում Եսայի գանգուրներին.

Ասացին. «Երկիր ունես՝ մի եղեմ,

Կիսումեն ծախից, կիսումեն աջից,
Պարտություն եղբեք չի լինի աջիդ...[4]

Քրիստոսը բուրվառը ձեռքին, գույգին սրբության ծիրանի է հազգնում և մաղ-
րում.

Դուք դառնալու եք
Յարգված պապ ու տատ,
Օջախով ամուր
Ու պարսպապատ:
Արցախը ծեզմից դաս է առնելու,
Զեր սերը մի սուրբ թաս է դառնալու,
Ու ծեր պատկերի առաջ փառավոր
Խոնարիվելու են սերունդները նոր [5]:

Կարդալով այս տողերը՝ աչքերիդ առջև հառնում է տաղանդավոր քանդակա-
գործ Ս. Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը» քանդակը, որ խոտացնում է
արցախիցի պապի և տատի հավատարիմ սերը միմյանց նկատմամբ և հայրենի
օջախին ու լեռներին կապված լինելու նրանց երազն ու կյանքը: Կասկածից
դուրս է, որ խանյանը իր այս պատկերն ստեղծելիս նկատի է ունեցել նաև ակա-
նավոր արվեստագետի՝ աշխարհին ծանոթ հուշակորողը: Երկու դեպքում էլ՝ և
քանդակագործը, և բանաստեղծը արցախցու առջև առաջին հերթին բացում են
հենց արցախցու մաքրամաքրուր հոգու աշխարհը՝ որպես ինքնաճանաչման,
ինքնահաստատման խորհրդանշի:

Խանյանը նահապետական ժամանակների բացահայտմամբ գեղարվեստո-
րեն խորացնում և ընդհանրացնում է ժողովրդական սովորությունները: Յարսանիքի
նկարագրման ընթացքը կապված է Եսայի և Ծուշամիկի ջերմ սիրո, հայրենի
օջախի հետ կապված տագնապի և պատախանատվության զգացումի հետ: Այդ
են վկայում և գուսանների ծոներգերը, և հարսանքավորների ապրումները: Օգ-
տագործելով հայ ժողովրդական էպոսի գեղարվեստական առանձնահատկու-
թյունները՝ խանյանը մեջբերում է տարեց և ջահել գուսանների գովքը Եսայի մա-
սին:

Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմը կարող ենք համարել Արցախի միջ-
նադարյան կյանքի համրագիտարան: Այն լայն կտավի վրա խոր ու ծշմարտացի,
գեղարվեստական անպատճից առանձնահատկություններով է պատկերում ար-
ցախահայության նիստուկացը, մարտական ոգին, անզիջում պայքարմ արարա-
կան խալիֆայության դեմ: Պոեմում էջից էջ, գլխից գլուխ նոր երանգներ են
երևան գալիս, ընդգրկում հստակ ու պատկերավոր խոսքի, հոգեբանական լից-
քավորման նոր ելեկջներ: Խանյանը համոզի գույներով ցույց է տալիս համաժո-
ղովրդական սերը իշխանի հանդեպ, արցախցիների պատրաստակամությունը՝
զորահավաք լինելու դեպքում պատրաստ ներկայանալ Գոչավանք:

Էպիկական շնչի տեսակետից առանձնապես աչքի է ընկում պոեմի երրորդ
մասը: Այստեղ բանաստեղծը ցույց է տալիս Բուղայի գլխավորությամբ արարա-
կան զորքի ներխուժումը Ուտիք և ապա Արցախ: Բանաստեղծը պատկերային
համոզի հյուսվածքով ներկայացնում է Բուղայի և նրա զորքերի դաժանությու-
նը:

Օգտվելով Թ. Արծրունու գորից՝ Ս. Խանյանը բանաստեղծական նոր հմա-

րանքմերով բերում է Բուղայի նամակ-հոխորտանքը՝ ուղղված Եսային: Նրանց միջև տեղի ունեցած առաջին ճակատամարտը, այդ ֆոնի վրա Սմբատ Բագրատունու անբացատրելի ծառայությունը Բուղային, Սմբատի որդու՝ Մուշեղի նախատինքը հորը:

«Ծուղակ» չորրորդ գլխում ցույց է տրված խալիֆաթի զինվորների նենգությունը հայ հայրենասերների հանդեպ: Գերված հայ զինվորներից մեկի՝ Յարեթակի խոսքը հնչում է որպես ժողովրդական իմաստության և խաղաղասիրության, անձնուրացության և ոգու արիության խորհրդանշից:

Պոեմի այուժեն բացահայտվում է հայրենիքի պաշտպանության գաղափարի հիմնա վրա: Եսայը հայկան Առանի նետ ու աղեղով ոտքի է ելում արաբական խալիֆայության դեմ՝ լավ հասկանալով, որ առանց պայքարի հնարավոր չէ փրկել ու պահպանել օջախ հայրենին: Պոեմի նախավերջին՝ «Յաղթանակ» գլխում խանյանը դրսնորել է էպիկական ժամրի մեջ ունեցած իր տաղանդը: Յարազատ մնալով ժողովրդական վիպերգերի, առանձնապես Էպոսի ավանդույթներին՝ խանյանը ինքնատիպ ու թարմ պատկերներով ցույց է տվել պարտության դատապարտված բռնակալի վերջին փորձերը և նրա դիմաց հայրենի հողից ուժ ու կամք առած Եսայի խորտակիչ հարվածը: Բանաստեղծը գումեղ ու տեսանելի պատկերներով ներկայացնում է մի կողմից դեպի Գտիչ վաճք սողացող թշնամական բանակի գործողությունները, մյուս կողմից՝ իշխան Եսայի ժողովրդական գորագործի իր պատրաստականությունը՝ ոսկին խորտակիչ հարված հասցնելու համար:

Պոեմի յուրաքանչյուր գլուխ, յուրաքանչյուր էպիգոր բանաստեղծական կատարման, բովանդակության և ծեր միասնության օրինակելի պատկեր է: Դրա լավագույն վկայություններից է «Յաղթանակ» գլխի հատվածներից մեկը՝ նվիրված Արցախս նահատակների հավերժությանը:

Պոեմի վերջին գլուխը վերնագրված է «Յյուրը»: Թ. Արծրունին իր «Պատմության» մեջ այնպես է նկարագրել Արցախը, այնպիսի ոգևորությամբ է պատմել արցախցիների հերոսական պայքարը, որ թվում է, թե նա եղել է Արցախում: Յաստատված չէ՝ արդյո՞ք նա եղել է պատմական Յայաստանի այդ նահանգում: Ս. Խանյանը պատկերում է Թ. Արծրունու այցը Արցախս, կոնկրետ՝ Ամարաս: Յանդիպնանը ներկայանում են Արցախի 12 գավառների աշխարհիկ և հոգևոր դասերի ներկայացուցիչները՝ արժանին հաստոցելով մեծ պատմիչին և գոհյալ մարտիկների հիշատակին: Թովման իր ելույթում ընդգծում է.

Պիտի ապրի քաջ Եսայը զրոյցներում հավերժաբար,
Քաջերի հետ նա կմտնի մատյանիս մեջ մեսրոպատառ:
Արժանի է քաջ Եսայը, արժանի է մեր ասքերին.
Նրա թուրը նոր ուժ տվեց արցախական հրաշքներին:
Դարերի մեջ Արցախը սեզ արժիվներ է ծնել անթիվ,
Դիզակեցի իշխանին էլ անվանում են լեռան արժիվ [6]:

Պոեմն ավարտվում է վերջերգով, որի մեջ խանյանը մեր պատմական անցյալի հերոսական ոգին կապում է ներկայի և ապագայի հետ: Այդ ընթացքում խորհրդանշվում է Տողասարի գագաթին թառած Գտչականքը, Եսայի ոգին և հայոց գիրը, «Սարը կանգում է, գիրը՝ հոլովող, կրակն անմարում», այդ կրակով Եսայն ապրում է հայոց աշխարհում: Բանաստեղծը Եսայի անմահությունը տես-

նում է Արցախա լեռներում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների և գործողությունների մեջ: Սերունդները նրան տեսել են իր նժույգին նատած մեր սելջուկների դեմ մարտնչելիս, մերթ մոնղոլների, մերթ թուրքերի:

Ս. Խանյանը «Արցախի արծիվը» պոեմը գրելիս հմտորեն շարունակել է ժողովրդական էպոսի և ավանդավեպերի գեղարվեստական նշակումների ավանդույթները: Բանաստեղծը, հարազատ մնալով պատմական իրադարձություններին, յուրովի մեկանքանություն է տվել թեմային: Օգտվելով Թ. Արքունու և մյուս պատմիչների գրքերից՝ իր կերպարներին ցույց է տվել պատմական քաղաքական կոնկրետ հարաբերությունների ոլորտում: Դայ ժողովրդի ազատագրական պայքարը ներկայացվում է որպես արդարացի գոյամարտ: Այդ ֆոնի վրա էլ ցույց է տրվում երկու հակառակորդ ուժերի, հակամարտ նպատակների բախում: Դայ արաքական հակամարտ հարաբերությունների ընթացքում համեմ են գալիս հայ ժողովրդի բնավորության գծերն ընդհանրացնող իշխան Եսայը և արաքական խալիֆայության դաժանությունը մարմնավորող Բուղամ: Դայ ժողովուրդը խաղաղասեր է, աշխատասեր, նրա միակ նպատակն է պաշտպանել իր հայրենի հողն ու ազգային, ընտանեկան սրբությունները: Արցախս զինվորյալներն ինքնական նետվում են մարտի, Եսայի դեկավարած ազատագրական պայքարին մասնակցում անձնուրաց: Եսայը բարձր է գնահատում հայրենիքի անկախության և խաղաղության արժեքը և իրեն զոհաբերում է Արցախ աշխարհի, ամբողջ Դայաստանի ազատության ճանապարհին:

Եսայը հայրենասեր լինելու հետ մեկտեղ ժողովրդասեր է, ընտանիքի պատիվը բարձր գնահատող այր, անձնազոհ զինվոր է, մարտական ընկեր: Խանյանը այս ամենը բացահայտել է գեղարվեստական թարմ պատկերներով:

Նույն հաջողությամբ նա ստեղծել է Յովսեփի, նրա զինակիցների, արաքական խալիֆայության դաժանությունը ներկայացնող Յուսուֆի, Բուղամի, Արդլահի, Արդիի կերպարները:

Արինքնող, ռեալիստական նույր երանգներով են ստեղծված արցախցի կանանց կերպարները: Առանձնապես հաջողված է Շուշանիկը: Նա հայ կնոջ բոլոր բարեմասնությունների խտացումն է: Նա հավատարիմ կին է, քնքուշ մայր, հայրենիքի ճակատագրով ապրող զինվոր:

«Արցախի արծիվը» պոեմը Արցախյան գոյամարտի տարիներին ստեղծված լավագույն ստեղծագործություններից է, արդի հայ պոեզիայի գեղեցիկ էջերից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խանյան Ս., Ընտիր երկեր, հ. III, Ստեփ., 2010, էջ 136:
2. Նույն տեղում, էջ 7:
3. Նույն տեղում, էջ 161:
4. Նույն տեղում, էջ 165:
5. Նույն տեղում, էջ 165:
6. Նույն տեղում, էջ 208:

РЕЗЮМЕ
История: настоящее и прошлое
(Поэма С.Ханяна “Орел Арцаха”)
Anahit Atayan

В годы Арцахского движения наша литература пополнилась произведениями, посвященными историческому прошлому.

В произведениях С.Ханяна также прозвучала историческая тематика, сливаясь с современными проблемами народа. Его поэмы стали призывом к борьбе нового поколения. Задачи освобождения и признания независимости Арцаха как истинные цели прибавили произведениям поэта героическое содержание. В поэме «Орел Арцаха» С.Ханян своим философским восприятием истории описал героические страницы борьбы армянского народа, представляя его как пример для современного поколения.

Указанное произведение является продолжением лучших традиций армянской классической поэмы.

SUMMARY
The History: the Present and the Past
(The poem by S.Khanyan, The Eagle of Artsakht)
Anahit Atayan

During the years of Artsakh war our literature was enriched with the works devoted to the historical past.

S. Khanyan in his works also touched upon the historic issues and thus wrote about the problems which troubled the people. His poems have become an appeal for the new generation to struggle. The freedom and independence fight of Artsakh are in the focus of his works. In his poem «The Eagle of Artsakh» S.Khanyan described the heroic pages of the Armenian people's history introducing it as them as a “specimen” for the young generation. In the poem "The Eagle of Artsakh" S.Hanyan presented the philosophical aspect of the struggle of the Armenian people.

The given poem can be regarded as the continuation of the best traditions of the Armenian classical poem.